ՀԱՅԱՍՏԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՇՐՋԱՓԱԿՈՒՄԻ ՏԱԿ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿՈՉ ԸՐԱՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՄԱԽՄԲՈՒԻԼ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ ԵՒ ՄԻԱՍՆԱԲԱՐ ԴԻՄԱԿԱԼԵԼ ԱՐՀԱՒԻՐՔԸ

ՎԱՌԵԼԱՆԻՒԹԻ ԵՒ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱԿԱՍԸ ՏԱԳՆԱՊԱԼԻ

ԵՐԵՒԱՆ, 19 ՅՈՒՆՈՒԱՐ 1990

Հեռագիր Սիփուհահայութեան հետ կապի Կոմիտէի նախագահ Կարլէն Դալլաքեանէն.–

Հայաստանի կառավարութեան գործադիրմարմինների դրասենեակի կողմից այսօր հրապարակուած տեղեկագրում հաղորդուում է որ Ատրպէյջանի Շահումեան և Գետաշէն շրջաններում զինուորական ստորաբաժանումները վերահսկում են իրադրութիւնը:

Յունուար 18է դրութեամբ Երեւանում են գտնուում շուրջ հազար հայ գաղթականներ, իսկ հինգ հազար հայեր ալ կուտակուել են Թուրքմենստան ԽՍՀ Քրասնովոդսք քաղաքում: Տեղի իշխանութիւնները եւ բնակչութիւնը նրանց ցոյց է տալիս առաջին օգնութիւն, ապահովում մնալով, հագուստով, ինքնաթիռի անվճար տոմսակներով:

Երէկ, հայկական հեռուստատեսութեամբ ելոյթ ունեցաւ Հայաստանի Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Սուրէն Յարութիւնեանը եւ ներկայացրեց երկրի ղեկավարութեան՝ առաջին հերթին Կորպաչովի հետ ունեցած հանդիպման արդիւնքները:

Իրադրութիւնը գնահատուած է ծայրայեղ ծանր: Զոհ են առնում անհրաժեշտ միջոցներ:

Ամենայն Հայոց Հայրապետ Վազգէն Ա. երէկ ելոյթ ունեցաւ հեռատեսիլէն եւ կոչ ըրաւ համախմբուել՝ ժողովուրդի հետ իշխանութիւնների համատեղ ջանքերով դիմակալելու համար արհաւիրքը:

«Լրաբեր» յայտագիրը հաղորդեց որ երէկ, Յունուարի 18ին, ազերի յեղուգները Նախիջեւանի կողմից ռմբակոծել են Արարատի շրջանի Երաշխաւան գիւղը: Սպանուել է երկու բնակիչ, կան վիրաւորներ:

Այսօրուան հանրապետական թերթերը բերում են Պաքուի սպանդից ճողոպրած հայերի վկայութիւնները ատրպէյջանցիների գազանաբարոյ արարքների մասին – բռնաբարութիւններ, դաշունահարութիւններ, կենդանի այրուած մարդիկ, բարձրայարկ շէնքերից նետուած ծերունիներ եւ երեխաներ, անյայտ կորածներ:

«Աւանգարդ» թերթը այսօր տպագրել է ականատեսի վկայութիւնը այն մասին որ Պաքուի օդակայանի նկուղներում եւ այլ վայրերում պահուում են բազմաթիւ հայ պատանդներ: Պաքուում սպանուածների թուում կան նաեւ ռուսեր եւ հրեաներ:

Գնալով ծանրանում է Հայաստանի սնունդեան վիճակը: Շրջափակումը շարունակուում է: Սպառուում է վառելիքը: Եթէ պենդին չտացուի այսօր կամ վաղը, կը կանգնեն նաեւ շտապ օգնութեան մեքենաները: Հումք չլինելու պատճառով երկէ փակուել է Երեւանի ալիւմինի գործարանը:

Չնայած այս ամէնին, Հայաստանը ուղղաթիռներով մթերք եւ դեղօրայք է հասցնում Շահումեանի, Գետաշէնի, Մարտակերտի եւ հայկական այլ բնակավայրերին:

Երեւանի մէջ, Հայկական Համազգային Շարժումի պատասխանատուներն Լեւոն Տէր Պետրոսեան հաղորդելով ԱՅՓԷԼԻ Թղթակիցին կոչմէ ըսած է թէ Հայաստան շարթէ մը ի վեր ամբողջական շրջափակումի տակ է: Վառելանիւթի պակասը զգալի է: Բազմաթիւ գործարաններ զգրած են բանելէ երկարատեւութեան չգոյութեան պատճառով, բայց ներկայիս սննդամթերքը բաւարար է հանրապետեան մէջ: Տէր Պետրոսեան աւելցուցած է թէ 20·000 հայ երիտասարդներ կոչմ ու պատրաստ են Ատրպէյջան մեկնելու, կռուելու համար ազերի թուրքերու դէմ:

Ապրիլի 12 ուղղաթիռները կը պարենաւորեն Լեռնային Ղարաբաղը: Հինգշաբթի օր անոնք չեն կրցած թռչիլ Թեհրան կատարել Երեւանէն՝ տասը ճիւնի պատճառով: Հակառակ ստիպողական վիճակին, խորհրդային բանակ հրամանատարութիւնը արուեստած է «Խ. Թ. 8» քանակի հրամանատարութիւնը՝ դէպի Լեռնային Ղարաբաղ թռչելու ուղղաթիռներուն՝ դէպի Լեռնային Ղարաբաղ թռչելու պարենաւորումի աշխատանքները շարունակելու: Երեւանի օդակայանի պատասխանատու մը ԱՅՓԷԼԻ Թղթակիցին ըսած է թէ ուղղաթիռները միայն սննդամթերք եւ դեղօրայք կը փոխադրեն Ղարաբաղ եւ հոնկէ վիրաւորներ կը բերեն եւ կը տեղափոխեն Հայաստանի մայրաքաղաքը:

ԱՅՓԷԼԻ Թղթակիցը այցելած է նաեւ Հայկական Համազգային Շարժումի կեդրոնը եւ նկատած է որ հոն գտնուող մարդկային ներուժը՝ բոլոր երիտասարդները կը կրեն զինուորական տարազներ՝ գոտիներ վրան հայկական զէնքերով երիցներ կարուած են, փոքրոնց վրան հայկական դրօշներով երիցներ կարուած են, խանակ մուրճ–մանգաղի:

Թղթակիցը խօսած է 22 տարեկան Սամուէլ անուն երիտասարդի մը հետ որ իրեն ըսած է թէ հայերը ուրիշ ելք չունին՝ բացի կամաւորական խմբակներ կազմելէ եւ մարդուելէ, որովհետեւ միշտ շրջափակումի տակ են եւ իրենց դէմ յայտարարուած է բաց պատերազմ, արիւնը կը հոսի եւ բազմաթիւ անմեղներ կը մեռնին ամէն օր: Ինչ որ պատահեցաւ Ռումանիոյ մէջ, կրնայ պատահիլ նաեւ հոս կարճ ատեն մը յետոյ: Թղթակիցը կ'աւելցնէ թէ այս նոյն մտահոգութեամբ հայկական ազգային բանակ մը կը կազմուի Համազգային Շարժումի կեդրոնին մէջ:

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՎԻՃԱԿԸ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԵՐԵՒԱՆԻ ՕԴԱԿԱՅԱՆԻՆ ՄԷՋ

Երեւանի օդակայանին մէջ, Պաքուէն եւ Ատրպէյջանի միւս քաղաքներէն եկած հազարաւոր հայ գաղթականներ շորրորդ օրն ըլլալով կը սպասեն որ հայ պատասխանատուներ զրազին իրենցմով: Հայ տիկին մը՝ Թաթիանա, որ Պաքուէն եկած է հօրը, մօրը եւ երեք զաւակներուն հետ, ըսած է թէ «մեր հասած օրը իւրաքանչիւր անդամին տուին 50 ռուբլի, անկէ եաթ ոչինչ ըրին: Մեր մէկ մտածումն էր մեկնիլ Պաքուէն: Կարծես հրաբուխի վրայ կը դտնուէինք: Ձեզ դիտեր թէ ի՞նչ կրնայ պատահիլ վաղը ազերի թուրքերու հետ»:

Ուրիշ մը ըսած է թէ նոյնիսկ տաք թէյ մը չեն տար օդակայանին մէջ, իսկ Թաթիանայի հայրը՝ 73 տարեկան նախկին զինուոր մը ըսած է թէ ինչ որ կը պատահի հետեւանք է Կորպաչովի սխալին:

Երեւանի հիւանդանոցին մէջ, Պաքու վիրաւորուած հայեր կը պատմեն ազերիներու խժդժութիւնները, որոնց դէմ զայած են տեղւոյն հայերը: Հիւանդ մը պատմած է թէ 13 Յունուարի յետ միջօրէին հարիւրի մօտ ազերիներ թալանեցին տունս, մինչ հարիւրաւոր ուրիշներ կը դիտէին տեսարանը: Կարծէք կրկէսի մը մէջ կը գտնուէինք կամ միջնադարուն: Զաւակները փրկուած են մի քանի ազերի դրացիներու կողմէ եւ յանձնուած զինուորական ջոկատի մը:

«Շատեր այս բոլորը չունեցան: Աչքս տեսայ ազերի բարբարոսներ, որոնք Լենինի հրապարակին վրայ Ֆուժպոլ խաղացին հայու մը գլխուն հետ: Ամէն ինչ կորնչուցինք եւ չեմ գիտեր թէ յետայսու ո՞ւր պիտի ապրիմ»:

Խորհրդային Միութեան նախագահ Կորպաչով, որ տակաւին հրապարակաւ եւ պաշտօնապէս չարտայայտուեցաւ Ադրբէյճանի արիւնալի իրադարձութիւններուն մասին, երէկ հանդիպում ունեցաւ Մոսկուայի մէջ գործարաններու, դիւղացիներու եւ մտաւորականներու պատուիրակութեանց հետ, անոնց բացատրելու համար կացութիւնը: Հանդիպումները պիտի տեւեն երկու օր: Խօսելով Անդրկովկասի մասին, Կորպաչով ըսաւ թէ կացութիւնը «չատ մտահոգիչ է այնտեղ» եւ աւելցուց թէ կառավարութիւնը ստիպուած եղաւ հոն բանակ դրկելու, զսպելու համար «ծայրայեղականները, վանդալիզմը եւ պայքարելու ոճրագործներու դէմ»:

Կորպաչով կ'ուզէ իր քաղաքականութեան հիմերը դօրացնել գանդուածին մօտ ի նախատեսութիւն Յունուար 29ին դումարուելիք կեդրոնական կոմիտէի լիագումար ժողովին եւ Փետրուար 14ին դումարուելիք դերպոյն խորհուրդի նստաշրջանին, որոնց մէջ ունի դիւրարեկ մեծամասնութիւն մը:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՊԱՏՐԱՍՏ Է ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

Համաձայն խորայելեան անգլիատառ «Ժերուսալէմ փոսթ» թերթին, Երուսաղէմի քաղաքապետ Թեմի Քոլլէք պատրաստակամութիւն յայտնած է ընդունելու հայ գաղթականները, եթէ փափաքին բնակիլ իր քաղաքին մէջ: Քաղաքապետը այս յայտարարութիւնը կատարած է Երուսաղէմի Հայոց Պատրիարք Եղիշէ Տէրտէրեան Սրբազանին հետ ունեցած խօսակցութեան ընթացքին եւ աւելցուցած է թէ ինքնակամութեան ունի հայ ժողովուրդի հանդէպ, որ շատ տառապեցաւ թուրքերու կողմէ 1915ին ի գործ դրուած ցեղասպանութեան եւ 1988 Դեկտեմբերի երկրաշարժի աղէտին:

Քոլլէք «Ժերուսալէմ փոսթ» թերթին ըսած է թէ ինքը պիտի միջամտէ խորայելեան իշխանութիւններու մօտ, եթէ Երուսաղէմի 2000 հաշուող հայ համայնքը պատրաստակամութիւն յայտնէ ընդունելու Ատրպէյջանէն փախած հայ գաղթականներուն մէկ մասը: Երուսաղէմի քաղաքապետը հասցուցած է անոնց ընդունման համար արտօնութիւն ձեռք բերել իշխանութիւններէն եւ անհրաժեշտ փոնտերը գտնել ըրել իշխանութիւններէն եւ անհրաժեշտ փոնտերը գտնել ըրել իշխանութիւններէն՝ գաղթականներուն տեղաւորումին համար:

Պատրիարք Տէրտէրեան հաղորդագրութեամբ մը ամրացուցած էր խորհրդային իշխանութիւնները եւ գանոնք պատասխանատու նկատած՝ ազերիներու կողմէ հայերու դէմ ի գործ դրուած ցեղասպանական արարքներուն: